

<https://doi.org/10.52837/27382702-2021-34.2-04>

ԿՐԿԻՆ ՀԱՅՈՑ ԲԴԵՇԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ*

Ալեքսան Հակոբյան

Բանալի բառեր՝ Գուգարք, Գարդման, բղեշխություն, կուսակալություն, Աղծնիք, Նուր-Արտաշրական, Կադմեացիք, Կորդուք, Կարկառ, Գորոզուայք, Միհրանեանք, Աղվանք, Բաղասական:

Հոդվածում քննարկվում է հայկական բղեշխություն-կուսակալությունների գլխավոր գործառույթի խնդիրը, և ցույց է տրվում, որ այն, ամենայն հավանականությամբ, եղել է զինական: Այդ բղեշխություն-կուսակալությունների վրա էր դրված Հայոց թագավորության հարևան դաշնակից ոչ մեծ պետությունների արտաքին սահմանի պաշտպանության հիմնական պատասխանատվությունը, ընդ որում տվյալ հարցում բղեշխին էր ենթարկվում համապատասխան սպարտիկ պետության զինուժը: Արդյունքում Մեծ Հայքի առանձին բղեշխությունների ու իրենց հարևան պետությունների միջև նաև ձևավորում էին յուրահատուկ հարաբերություններ, որոնք երբեմն առաջացնում էին անջատողական միտումներ՝ թեժացված արտաքին ուժերի կողմից: Ցույց է տրվում նաև, որ IV դարում Հայոց Արևելից կողմանց կուսակալ իշխանությունները՝ Գարդմանացիք և Սյունիքից անջատված Գորոզուայք - «Գարգարացիք», Մեծ Հայքի արքայի անունից կոնկրետ բղեշխական զինական գործառույթներ էին իրականացնում Կուրի ձախափնյա Աղվանից և Բաղասականի թագավորությունների նկատմամբ՝ կրելով գլխավոր պատասխանատվությունը նրանց հյուսիսային սահմանների պաշտպանության համար Կովկասյան լեռների սահմանագծով և Դերբենդի անցքով:

Ինչպես հայտնի է, արաբական աղբյուրները Սասանյան տերության Կավատ և Խոսրով Անուշիրվան արքայից արքաներին են վերագրում (այսինքն՝ նրանց կամքին ու ժամանակաշրջանին՝ VI դ. առաջին կես) Այսրկովկասի երեք նշանավոր քաղաքների կառուցումը՝ «Ջարդաման»-ի (այսինքն՝ Գարդմանի¹), Սուղդաբիլի (այսինքն՝ Գուգարաց բղեշխության

* Հոդվածն ընդունվել է տպագրության 05.12.2020 թ.: Գրախոսվել է՝ 24.06.2021 թ.:

¹ Այս քաղաքը կարելի է համարել ուշ «Ջարդախու» հորջորջումով հայտնի գյուղի հետ (հմմ. Ջարդախու - Ջարդաման): Ջարդախուի նոր կենտրոնից 2 կմ հարավ-արևելք ձգվող բլրաշարի վրա (թերևս՝ հենց բերդակիր, կոորդինատները՝ N.40°43'22,8,

կենտրոն Յուրտավի) և Կարկառի (Հարավային Արցախի Գորոզուաց կողմնապահ իշխանության հյուսիսում, XVIII դ. կառուցված Շուշի քաղաքից 3 կմ արևելք)²: Մեզ համար կարևոր է, որ այդ երեքը նշանակալի ռազմավարական («կողմնապահական բղեշխական») կենտրոններ էին՝ ուղղված ողջ Առաջավոր Ասիայի համար կենսական նշանակություն ունեցող Կովկասյան սահմանագծի պաշտպանությանը³:

Այս առթիվ ներկայումս կարելի է նշել, որ անկախ գրականության մեջ բղեշխական հաստատության մասին հնչած տարասեռ կարծիքներից (որ արտացոլում են տարբեր երկրների ու ժամանակների համար տարբեր աղբյուրներում արձանագրված դրանց գործառույթները⁴)՝ հարկ է նկատել, որ Հայոց բղեշխությունները (հաստատված դեռ Տիգրան Մեծի օրոք⁵ և տարբեր ինտենսիվությամբ գոյատևած մինչև Արշակունիների թագավորության բաժանումը IV դ. վերջին) կատարել են դասական կողմնապահական-կուսակալական փոխարքայությունների գործառույթը (մեր պատմիչների խոսքերով՝ «կողմնակալք», «սահմանապահք», «սահմանակալք»): Այն է՝ բղեշխն իրավասություն ունեւ թագավորի անունից և «թագաւորից յետոյ երկրորդի» (Ստրաբոնի խոսքով՝ *ὁ δευτερος*)՝ փոխարքայի պատվերով իրականացնելու վարչա-տնտեսական ու զինվորական կառավարումը տերության որոշակի սահմանային նահանգում՝ միաժամանակ, սակայն, իր *հրամանատարության տակ ունենալով* նաև դրա սահմանակից *կրտսեր դաշնակից* պետության ամբողջ զինական ուժն ու կրելով այդ երկրի *արտաքին սահմանի*

E.45°53'52,8, Alt.1342, խորհրդատվության համար շնորհակալ եմ հնագետ Գագիկ Սարգսյանին) պահպանվել են հին քաղաքագյուղի՝ միջնադարից եկող ավերակները (հմմ. **Կարապետյան** 2004, 517–518):

² Տե՛ս **Караулов** 1902: 17; **Караулов** 1903: 15-16; **Баладзори** 1927: 5-7; **Արաբ մատենագիրներ** 2005, 265-266; 448-449; 495; 560:

³ Տե՛ս դեռեւս **Սարգսեան, Յակոբեան** 2012, 43-44, 57-58:

⁴ Տե՛ս, օր.՝ **Toumanoff** 1963, 155-192; **Hewsen** 1988-1989 : 271-319; 1990-1991, 147-183; **Մանասերյան** 1999, 77-85; **Յարութինեան** 2001, սն. 97-180; **Хуршудян** 2003: 33-72; **Хуршудян** 2015: 21-68.

⁵ Տե՛ս **Marquart** 1901: 165–173; **Մարկվարտ** 1903, 1-5, 114-119; **Адонц** 1908: 283; **Կրկյաշարյան** 1966, 257-262: Ըստ Պլուտարքոսի մի հեգնալից պնդման՝ Տիգրան Մեծին միշտ ուղեկցում էին 4 արքայիկներ, որոնց շատերը համարում են հենց բղեշխներ: Տե՛ս **Plut. Luc. XXI, 6**; **Պլուտարքոս** 2001, 55 («Նրա մոտ շատ թագավորներ կային սպասավորի դրությամբ, իսկ նրանցից չորսին նա մշտապես պահում էր իր մոտ որպես ուղեկից կամ թիկնապահ. երբ նա գնում էր ծիով, նրանք ... վազում էին նրա կողքից, իսկ երբ նստած էր լինում և զբաղվում պաշտոնական գործերով, նրանք կանգնում էին նրա շուրջը, ձեռքները կրծքներին»):

պաշտպանության ողջ պատասխանատվությունը: Համարվում է, որ բղեշխի այդ յուրօրինակ ռազմա-վարչական հաստատությունը ձևավորվել է Իրանական տերության պետական համակարգում Պարթևների դարաշրջանում՝ գոյատևելով մինչև VI դարի Սասանյան արքա Խոսրով Անուշիրվանի ժամանակը¹, իսկ Մեծ Հայքի թագավորություն այն բերել է Տիգրան II-ն, ըստ ամենայնի՝ հենց արքայից արքայի իրավունքն ու պարտականությունները ստանձնելիս: Դրանից վաղ՝ Աքեմենյանների օրոք, Հերոդոտոսին և այլ հույն հեղինակների հայտնի էին Պարսից միապետի այն բարձրաստիճան զորական պաշտոնյաները՝ կոչված «արքայի աչք»՝ ὀφθαλμός τοῦ βασιλέου (ըստ Անտոնինո Պալիարոյի վերականգնման՝ հենց հին իրան. *pati-axš, որից՝ bitaxš և հայ. bdeašx²), որոնց նա իրենց զորախմբերով ուղարկում էր՝ վերահսկելու նահանգների սատրապներին³:

Ե դարի հայկական աղբյուրները գիտեին մեր երկրի *չորս* բղեշխությունների մասին, որպիսի թիվը, թերևս, արտահայտում էր նրանց վաղ՝ դասական վիճակը: Ըստ Ագաթանգեղոսի բնագրի՝ դրանք էին (հերթականության որոշ շեղումներով). ա) «Մեծ» կոչված Աղձնեաց բղեշխը Ասորիքի կողմում, այսինքն՝ որպես Օսրոյէնէ - Եդեսիայի թագավորության արտաքին սահմանի պաշտպանության պատասխանատու⁴; բ) Նոր-Շիրական կողմի բղեշխը, այսինքն՝ Կորճայք նահանգի արևելյան մասի՝ Կաղմէացիք կոչված գավառախմբի (կոչվում էր նաև՝ Ծաւղէք, Զաւ գաւառ և Զաբդիկէնէ⁵) իշխանը՝ Նոյր-Արտաշրական պաշտոնական անունով հայտնի ուշ անտիկ և վաղմիջնադարյան Ադիաբէնէ - Ասորեստան թագավորության կողմում⁶ (ըստ Դ դարի «Զօրանամակ»-ի՝ այդ իշխանին էր վստահված երկրի հարավային կողմի՝ «Հարավային

¹ Տե՛ս, օր.՝ Новосельцев 1980: 111; Хуршудян 2015: 60.

² Pagliaro 1929-1930: 160-168.

³ Her. I, 114; Հերոդոտոս 1986, 50: Հմմ. Хуршудян 2015: 26.

⁴ Ըստ Մովսէս Խորենացու գրանցած տեղեկանու (ինֆորմացիայի)՝ Աղձնեաց բղեշխները սերում էին հին Ասորեստանի արքա Սենեբերիմի տոհմից, Հայաստան եկած նրա որդի Սանասարից (Խորենացի 1913, գլ. Ա.Իգ, էջ 70–71: Մատենագիրք Հայոց 2003, 1814):

⁵ Կաղմէացիք - Զաւ գաւառ - Զաբդիկէնէ այս համադրման մասին տե՛ս Յակոբեան 2009, 290-293:

⁶ Ըստ Խորենացու պնդման՝ այդ սահմանագիծը Կաղմեացիներին վստահել էր դեռ Հայկյան Արամ նահապետը. «քանզի զարեւելեանն եւ զհարաւայինն նուաճեալ [Արամն], յանձնեալ էր ի ձեռն երկուց ցեղիցս այսոցիկ. Սիսակեանցն՝ զարեւելս, եւ որք ի Կաղմեայ տանէն՝ զԱսորեստանին» (Խորենացի 1913, գլ. Ա.ժդ, էջ 46; Մատենագիրք Հայոց 2003, 1790-1791):

Դռան», զորքերի հրամանատարությունը⁷); գ) Կորդվաց կամ Կորդովտաց իշխանը, այսինքն՝ Կորճայք նահանգի արևմտյան Կորդուք գավառի տերը Արուաստանի թագավորության (Beth-Arabaye, Միգդոնիա՝ Մծբին կենտրոնով) կողմում; և դ) Գուգարաց բղեշխը («որ Միս անուանեալ բղեաշխն»⁸) Մասքութների կողմում, այսինքն, ինչպես բոլորը համարում են՝ Վրաց և Աղվանից թագավորությունների՝ հյուսիսային տափաստանաբնակների դեմ ուղղված Կովկասյան լեռների պաշտպանական գծի պատասխանատուն⁹:

Տեղին հիշենք Ագաթանգեղոսի երկու բնագրերը. «Եւ ի զինուորական կողմանէն՝ *զչորեսին* գահերէցսն իւրոյ տաճարին, որ *բղեաշխքն կոչին*. զառաջին սահմանակալն ի Նոր Շիրական կողմանէն, եւ զերկորդ սահմանակալն յԱսորեստանեայց¹⁰ կողմանէն, եւ զերրորդն՝ յԱրուաստան կողմանէն, զչորրորդն՝ ի Մասքթաց կողմանէն¹¹. զմեծ իշխանն Անգեղտան, եւ զթագադիր ասպետն...» (Հռոմ մեկնող «բագում

⁷ **Յակոբեան** 2011, 546 («Հարաւային դռնն է. / Ա. Կադմէացի - Ա՝ՎՄ [(13200) մարտիկ արք], / Բ. Կորդուացի - Ռ [(1000) մարտիկ արք]...»): Ուշագրավ է նաև, որ ըստ Եղիշեի՝ պարսից Հազկերտ II արքայի նամակները ստացել էին Հայքը, Վիրքը, Աղվանքը, Լփինքը, Ծաղէքը, Կորդուքը և Աղծնիքը (**Եղիշե** 1957, յեղ. Ա, էջ 10): Ըստ Պետրոս Պատրիկիոսի (**Petr.** 1860, fragm. 14՝ 298 թ. Մծբինի խաղաղության պայմանագրով Հռոմին անցած (տվյալ դեպքում՝ իրապես Մեծ Հայքի արքայի տիրապետության տակ մտած) անդրտիգրիսյան նահանգների հերթականությունն էր՝ Անգեղտուն, Ծոփք (Մեծ), Արզանէնէ, Կորդուք, Ծաղէք-Ջարդիկէնէ:

⁸ Արմագիում (Կորից հարավ) պեղված բղեշխների տապանատան մի երկլեզուեան (արամէերէն եւ յունարէն) վիմագրում Ձեվախաս բղեշխը կոչված է «կրտսեր» («Ζηουάχου τοῦ νευτέρου πικάζου»). Տե՛ս **Церетян** 1941: 23.

⁹ Ըստ Պատմահոր հայթայթած տվյալների՝ Գուգարաց բղեշխները սերում էին Աքեմենյան Դարեհ արքայի նախարար ոմն Միհրդատից (յաւելելով՝ «զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացոց [var. Իվերիացոց] ազգացն, զոր էած Նաբուգոդոնոսոր, որպէս Աբիդենոս պատմէ...») և Հայոց առաջին Արշակունի արքայ Վաղարշակի կողմից նշանակվել էին «ընդդէմ լերինն Կալկասայ կողմնակալ հիսիսոյ»՝ վարելու «զկողմնակալութիւն հիսիսային լերանցն եւ Պոնտոս ծովու» (**Խորենացի** 1913, գլ. Բ.ը, էջ 114; գլ. Բ.ժա, էջ 121; **Մատենագիրք Հայոց** 2003, 1859–1860, 1867–1868): Հավելենք, որ ըստ «Ջորանամակ»-ի՝ Գուգարաց բղեշխին էր վստահված երկրի «Հիսիսային Դռան» զորքերի հրամանատարությունը՝ «ՏՇ [(4500) մարտիկ արք]»-ով (**Յակոբեան** Գահնամակ 2011, 542):

¹⁰ Ձեռագրերի մեծ մասում՝ «յԱսորեստանեաց», հունարենում ևս՝ «ἀπὸ τῶν τῆς Ἀσσυρίας μερῶν» (**Lafontaine** 1973: 336, § 164): Բայց դա հարկ է սրբագրել (կամ գոնէ ընկալել)՝ «յԱսորեաց»: Հմմ. **Անանուն**, Աշխարհացոյց 2013, սն. 148–151, 153–156, 167:

¹¹ Հունարեն թարգմանված է՝ «Մասքթաց Հոնաց». «ἀπὸ τῶν Μασσαχούτων Οὐννων μερῶν» (**Lafontaine** 1973: 336, § 164):

մեծամեծերի» ցանկում)¹²; «...գումարեաց զգլխաւորս նախարարացն եւ զկուսակալս աշխարհացն. առաջին՝ իշխանն Անգեղ տան, երկրորդ՝ իշխանն Աղծնեաց, որ է *Բղեշխն մեծ*, երրորդ՝ իշխանն մարդպետութեան իշխանութեանն, չորրորդ՝ իշխանն թագակապ իշխանութեան ասպետութեանն, հինգերորդ՝ իշխանն սպարապետութեան, զաւրավար Հայոց աշխարհին, վեցերորդ՝ իշխանն Կորդովտաց¹³ աշխարհին, եալթներորդ՝ իշխանն Ծոփաց աշխարհին, ութերորդ՝ իշխանն Գուգարացոց աշխարհին, որ *Միս անուանեալ բղեշխն*, ... մետասաներորդ՝ իշխանն Սինեաց աշխարհին...» (Կեսարիա մեկնող «Հայաստան աշխարհի ... ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիրաւորք» 16 իշխանների ցանկում)¹⁴: Հմմ. Փալստոս Բուզանդի մոտ. «*Չայնու ժամանակաւ ասպտամբեաց յարքայէն Հայոց մի ի ծառայոց նորա՝ մեծ իշխանն Աղծնեաց, որ անուանեալ կոչէր Բղեշխն, որ էր մի ի չորից՝ գահերէց, բարձերէց տաճարին արքունի*»¹⁵:

Ընդ սմին, պիտի արձանագրենք, որ վերոնշյալ գործառույթներով կուսակալությունների թվաքանակն ինչ-որ պահի էապես ավելացել է՝ թեկուզ և, գուցե, առանց *բղեշխություն* անունը ստանալու: Դա վերաբերում է և՛ հարավ-արևմուտքում Անգեղտան կուսակալությանը, որի վրա, ըստ «Ջորանամակ»-ի, դրված էր երկրի արևմտյան կողմի («Արեւմտեան Դռան») զորքերի, այդ թվում՝ Աղծնիքի զինուժի ղեկավարման պարտականությունը¹⁶, և՛ հյուսիս-արևմուտքում Սպերի Բագրատունյաց կուսակալությանը, որի մասին Ագաթանգեղոսի երկի «Գրիգորի վարք» կոչված տարբերակի՝ Լուսավորչին Կեսարիա ուղեկցող 16 իշխանների ցանկում ասված է մի կարևոր լրացումով. «չորրորդ՝ ասպետութեան իշխանը, որը *պաշտպանում էր Կովկասյան լեռների կողմերը և Ճանիքը [Τσάνων]*»¹⁷

¹² Ագաթանգեղոս 1909, գլ. ՃԻԶ, § 873, 459–460; Մատենագիրք Հայոց 2003, 1722–1723:

¹³ Ձեռագրերի մեծ մասում և Ուխտանես պատմիչի մոտ՝ «Կորդուաց» (նաեւ՝ «Կորդուացոց»):

¹⁴ Ագաթանգեղոս 1909, գլ. ՃԺԲ, § 795, 414; Մատենագիրք Հայոց 2003, 1683–1684:

¹⁵ Բուզանդ 1933, գլ. Գ.թ, 32; Մատենագիրք Հայոց 2003, 287: Հմմ. նաև Բուզանդ 1933, գլ. Դ.իդ, 149; Դ.ձ, էջ 166; Ե.ժ, 214; Ե.ժգ, 216; Մատենագիրք Հայոց 2003, 355, 364, 389, 390:

¹⁶ Տե՛ս Յակոբեան 2011, 541 («Արեւմտեան դուռն է. / Ա. Անգեղտուն - ՎՆ [(3400) մարտիկ արք], / Բ. Բղեշխն Աղծնեաց - Տ [(4000) մարտիկ արք]...»):

¹⁷ Տե՛ս Garitte 1946: 73; Յունարէն Վարք 1966, հ^ր Թ-ժ, 79; Ագաթանգեղոս 1977, 178, ծն. 44: Մեր ընդգծած լրացումը կա նաև «Վարքի» արաբերեն տարբերակում (գրչական սխալներով). «չորրորդ՝ իշխանն Ասպետաց՝ ըստ կոչմանն Ասպետ, որում յանձն էր

(այդ լրացումը հարում է Պատմահոր հաղորդմանը այն Բագարատ Բագրատունու մասին, որին Հայոց Վաղարշակ արքան նշանակել էր «ի ծայրս հայերէն խաւից կողմնակալ, իշխան բիրուց եւ հազարաց, յարեմպից կուսէ»¹⁸), ե՛ւ արեւելքում Սիւնեաց կուսակալութեանը, որին, ըստ «Զօրանամակ»-ի՝ վստահված էր երկրի արևելյան կողմի («Արևելեան Դոան») զորքերի հրամանատարությունը¹⁹ (դա փոխանցված էր նրան Մարդպետական կուսակալությունից²⁰), և՛ հատկապես հյուսիս-արևելքում, որի իշխանների համար Խորենացին Բ.ը գլխում օգտագործում է «կողմնակալ բիրաւոր» եզրույթը: Այս վերջին կողմում, ըստ ամենայնի՝ Գարդմանացիք իշխանությունը (Գարդման կենտրոնով, անտիկ շրջանում՝ Սակասէնէ եպարխիա²¹) պատասխանատու էր հարևան Աղվանից թագավորության, իսկ Գորոզուի կամ «Գարգարացիք» իշխանությունը (Կարկա՛ռ կենտրոնով)՝ Մասքթաց թագավորության (=Բաղասականի, մինչև Դերբենդի անցքը) արտաքին սահմանների պաշտպանության համար: Հենց այս վերջինի արքա Սանեսանի կենտրոնատեղի («ճամբար բանակին»)՝ Վատնեան դաշտ էր հասել ու այնտեղ եղերաբար նահատակվել Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիս Մանուկը, ով «...եհաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց»²² և ում մարմինը, ըստ Խորենացու և Փավստոսի տվյալների՝ իր աշակերտները վերադարձրին ու հուղարկավորեցին Հարավային Արցախի Հաբանդ (կամ Փոքր Սյունիք) գավառի Ամարաս ավանում:

պահպանութիւն լերանցն Կօսեաց եւ «Մ-տ-զ-ն»եանց [հմմ. Τσάων - Ա. Յ.]» (Մարր 1906: 115; Մառ 1911, 49; Жамкочян 2016: 164).

¹⁸ Խորենացի 1913, գլ. Բ.գ, 105: Մատենագիրք Հայոց 2003, 1851: «Վարքի» նշած բուն «Կովկասեան լեռների կողմերի» պաշտպանության պատասխանատվությունը Խորենացին վերագրում էր Գուգարաց բղեշխներին. «Իսկ ընդդէմ լերինն Կալկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ գմեծ եւ զհզար ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ բղեաշխ Գուգարացոց, որ էր լեալ ի զաւակէ Միիրդատայ, Դարեհի նախարարի...» (Խորենացի 1913, գլ. Բ.ը, 114: Մատենագիրք Հայոց 2003, 1859-1860):

¹⁹ Յակոբեան 2011, 544 («Արեւելեան դուռն է. / Ա. Սիւնի - Ա՛ՔՆ [(19400) մարտիկ արք], / Բ. Ամատունի - Տ [(4000) մարտիկ արք]...»):

²⁰ Տե՛ս Մուշեղյան 2007, 219-221:

²¹ Գարդմանացիք - Սակասէնէ համադրման մասին մանրամասն տե՛ս Հարությունյան 1994, 260: Յակոբեան 2009, 416-417:

²² Բուզանդ 1933, Գ.ե, 22: Մատենագիրք Հայոց 2003, 281 (նաեւ՝ «...ի հնգետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց եւ Աղուանից, այսինքն՝ սահմանացն Մասքթաց»):

Վերջինս, անշուշտ, Գորոզուի իշխանության հոգևոր կենտրոնն էր, որի եկեղեցու հիմքերը հասցրել էր օծել Գրիգոր Լուսավորիչը²³:

Հարկ է նկատել, որ սահմանակից կրտսեր դաշնակից երկրի արտաքին սահմանի պաշտպանությունն իրականացնելու դիմաց բղեջխություն-կուսակալությունները հաճախ իրենց *վարչական* կառավարման տակ էին ստանում այդ երկրի բուն տարածքի մի սահմանային կտոր: Հայաստանի հյուսիսում դա վերաբերում է նախ և առաջ Գուգարքին կցվող երեք՝ Մանգլեացփոր, Բողնոփոր և Քուիշափոր գաւառներին: Դրանք «Աշխարհացոյց»-ի մի բաժնում՝ Վիրքի նկարագրության մեջ, նշվում են իբրև *Հայոց երկրից հանված* գավառներ («Եւ զՄանգլեացփոր, եւ յՍանջուղէ քաղաք ի Քուիշափոր, եւ յՍողնոփոր, մինչեւ ցՊարուար գաւառ, որ պատէ զՏրփխիս քաղաքաւ. բայց երեք փորակդ ի Հայոց հանէ»), իսկ մյուս բաժնում՝ Գուգարք նահանգի 9 գավառների ցանկում, այդ «փորակները» չեն յիշատակում («Ունի գաւառս *ինն*. զՁորոփոր, զԿողբափոր, զԾոբափոր, զՏաշիր, զԹոեղս, զԿանգարս, զՋաւլախս Վերի, զԱրտահան, զԿալարճս: ... Ունին արդ Վիրք՝ *հանեալ ի Հալլոց*»)²⁴: Ընդ որում՝ հավանաբար, հայ բղեջխների կառավարման տակ գտնվող այդ երեք գավառների տարածքը հյուսիսում մի պահ հասնում էր Կուր գետին, որի ափին՝ Արմազիում, ձևավորվել էր նրանց տոհմական գերեզմանատունը²⁵:

Հայաստանի հարավ-արևելյան կողմում, ըստ ամենայնի՝ բղեջխական կողմնապահության նույն գործառույթի հետ էր կապված Ատրպատականի հարակից մասում հայ Արշակունիների «Ձեռական իշխանութեան» հարափոփոխ կարգավիճակի դեպքը²⁶. այն հաճախ ստանում էր Ատրպատականի սահմանների պաշտպանության համար ևս պատասխանատու դարձող Հայոց թագավորը: Դրան նման էր հարևան Պարսկահայք նահանգի Հեր և Ջարևանդ գավառների կարգավիճակը, որոնք Իրանի արքաները մի հակառակ տրամաբանությամբ երբեմն տալիս էին Հայոց սահմանների պաշտպանության համար ևս պատասխանատու կարգվող Ատրպատականին: Դրա հետքը կա դեռ անտիկ շրջանում. ըստ Ստրաբոնի՝ Հուլիոս Կեսարը և Անտոնիոսը Ք. ա. I դ. 40-

²³ **Բուզանդ** 1933, Գ.գ. 7: **Մատենագիրք Հայոց** 2003, 283, 2011: **Խորենացի** 1913, գլ. Գ.գ. 260: Վերջին մտքի համար մանրամասն տե՛ս **Акопян** KB 1987: 72-81.

²⁴ Տե՛ս **Անանուն**, Աշխարհացոյց 2013, սն. 118-119 եւ 142:

²⁵ Տե՛ս **Церетели** 1941: 23.

²⁶ Վերջինիս մասին ամփոփ տե՛ս **Հարությունյան** 1988, հ^մ 3, 56-67, հ^մ 4, 44-60:

ական թթ. հանել էին Συμβάκη կոչուած գավառը (հմմ. Քարաշամբ, Շամբի ձոր Զարեանդում) Հայոց Արտավազդ II-ի թագավորությունից ու հանձնել Ատրպատականի ավելի հնազանդ արքային²⁷:

Հայաստանի հարավային և արևմտյան կողմերում նույն բղեշխական գործառույթի հետ են կապված թվում Օսրոյէնէի (Եդեսիայի) Աբգարների թագավորությունը և Փոքր Հայքն ու կապադովկիական ինչ-ինչ շրջաններ Մեծ Հայքի արքաների հետ կապելու դեպքերը, Աղծնիքին հարևան՝ «Միջագետք Հայոց» կոչված և ավելի արևելք ընկած՝ Կադմէացիքին հարևան Մահկերտուն, Նիխորական, Դասն երկրամասերի վերաբերյալ մեր մատենագիրների պատկերացումները: Հիշենք, թե ինչպես էր Խորենացին ներկայացնում Մեծ Հայքի մաս եղած «Միջագետքի»²⁸ կորուստը. «Բայց թիկունս առնելով Երուանդայ [Վերջինի - Ա. Յ.] զՀռոմայեցիս՝ ոչ ինչ վտանգի ի թագաւորութեանն Վեսպիանու եւ Տիտոսի, թողլով ի նոսա զՄիջագետս»²⁹: Փավստոս Բուզանդի խոսքերով՝ Հայոց Պապ արքան Վաղես կայսրից պահանջել էր և՛ Կեսարեան, և՛ Եդեսիան («...եթէ Կեսարեաւ հետ՝ եւ տասն քաղաք մեր լեալ է,

²⁷ **Strab.** 1915-1925, XI, 13, 2; **Ստրաբոն** 1940, 47: Ի դեպ, սրան որոշ նմանություն է ունեցել նաև Հռոմի սահմանային ռազմա-վարչական համակարգը: Ըստ Խորենացու՝ Տրդատ Մեծի մահվանից հետո Կոստանդին Մեծի «պալատի յարդարիչ», Արևելքի զորավար Անտիոքոսը բանակով մտել է Հայաստան, գահին դրել Խոսրով Կոտակին, նշանակել երկրի չորս կողմերի զորագնդերի սպարապետներին («Առաջին՝ Բագարատ ասպետ, զարավար արեւմտեան գնդին. երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց եւ բղեշխ Գուգարացոց, սպարապետ հիւսիսային զարուն. երրորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց, զարավար արեւելեան գնդին. չորրորդ՝ Մանածիրո նահապետ Ռշտունեաց, սպարապետ հարաւային զարուն»), նրանց տալով «զիրաքանչիր զարս», Գաղատական գնդով ամրապնդել է արևելյան սահմանը («ունել պահ յարքայէն Պարսից»), ապա շարժվել Փայտակարանում ապստամբած փոխարքա Սանատրուկի դեմ (**Խորենացի** 1913, գլ. Գ.ե-գ, 261-263): Ըստ Բ. Հարությունյանի՝ «Արդէն հռոմէական կայսր Սեպտիմիոս Սեւերոսի օրօք, Հայաստանի ու Հռոմի միջեւ կնքուած պայմանագրի համաձայն՝ Հայոց թագաւորութիւնը, ինչպէս նաեւ նրա ազդեցութեան ոլորտում գտնուող Իբերիայի եւ Ալբանիայի թագաւորութիւնները, ներառուեցին Կապադովկիայի ռազմապաշտպանական համակարգի մէջ» (**Արտյոնյան** 2001: 25): Ուշագրավ փաստ է նկատել նաև Հ. Հարությունյանը. Կապադովկիայի ստրատեգոս և պատմիչ Արրիանոսն իր մի երկում գրել է, որ իրենից առաջ (Բ դարի 30-ական թթ.) տեղի բանակում հայկական զորաջոկատ է եղել (**Перевалов** 2010: 178 /Диспозиция..., § 29/, հ մ մ. **Արտյոնյան** 2015: 236), ինչը կապված է թվում Հռոմի այդ արևելյան պրովինցիայի ունեցած կողմնապահական-«բղեշխական» գործառույթի հետ:

²⁸ **Խորենացի** 1913, գլ. Բ.լգ, 151-156; գլ. Բ.լգ, էջ 160: **Մատենագիրք Հայոց** 2003, 1899-1905, 1908:

²⁹ **Խորենացի** 1913, գլ. Բ.լլ, 164 : **Մատենագիրք Հայոց** 2003, 1913:

արդ՝ ի բաց տո՛ւր, եւ զՈւռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց, արդ՝ եթէ ոչ կամիս խանգար ինչ առնել, տո՛ւր ի բաց, ապա թէ ոչ, կռուիմք մեծաւ պատերազմաւ»³⁰: Սրանց հարում է Սեբեոսի կողմից Վահրամ Չուբինին վերագրված պատկերացումը Հայոց երկրի հյուսիսային, հարավային և արևմտյան սահմանների մասին («Եւ թողում ձեզ զերկիրն ամենայն Հայոց մինչեւ ցԿապկոհ եւ ցղուռն Աղուանից. եւ յԱսորոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄրծուին [*իմա՛ Մծբին - Ա. Յ.*] եւ զՆոր Շիրական մինչեւ ցսահմանս Տաճկաց, զի *առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. եւ ընդ արեւմուտս մինչեւ ցԿեսարիայ Կապադովկացոց»*)³¹: Ասորիքի հանդեպ հավակնությունների մասին մի վիպական-նովելային պատում ունի Հովհան Մամիկոնյանը. «Իսկ նա ասէ [*Հայոց իշխան Սմբատը Սուրէն Պարսից զօրավարին - Ա. Հ.*]. «Հաւանեմ տրոցդ. բայց հարիւր եւ ութսուն հազար դահեկանի, որ փայտ են տարեալ ի Քարքէոյ, եւ ԴՃՌ դահեկանի, որ խոտ են կերեալ ի դաշտէդ, եւ ԿՌ դահեկանի, որ զեղն եւ զեղջերու եւ զնապաստակ երկրիս որսացեալ են եւ կերեալ, զհացի եւ զջրոյ գինն թողում, բայց զանոյշ *գինին Ասորոց* եւ Սալնայ եւ Մորխայ այս երկու տարի է, որ յինէն կտրեալ էին եւ ինքեանք արբին, զայն թող տա՛ն»³²: Ուշագրավ է նաև, որ ըստ Թովմա Արծրունու հաղորդած պատումի՝ Սանասարից սերվող, այսինքն՝ Աղծնիքի իշխանները, որ մասնակցել էին Կյուրոս I արքայի հաղթական պատերազմներին, նրանից որպէս պարգև ստացել էին «զՏմորիս ամրոցաւն եւ *զգեպափնեայսն Նինուէի»*³³:

Բղեջխական-կուսակալական գործառույթի յուրօրինակությունը հիմք էր դառնում նաև որոշակի սերտության հարաբերությունների ձևավորման համար Հայոց տվյալ նահանգի և նրա հարևան դաշնակից պետության միջև՝ առաջացնելով երբեմն հիմնավոր, երբեմն անիրական ու կռվախնձորային փոխադարձ հավակնություններ (օր.՝ «Միջագետք Հայոց» երկրամասի, Գուգարք նահանգի, Հեր և Զարեվանդ գավառների կամ Ատրպատականում հայ Արշակունիների «Ձեռական իշխանութեան» դեպքերում): Այդ սերտությունը, ընդհուպ մինչև իրար անունով կոչվելը

³⁰ **Բուզանդ** 1933, գլ. Ե.թ, էջ 235: **Մատենագիրք Հայոց** 2003, 401: Այս տեղեկութեան արժեւորման առումով տե՛ս **Հարությունյան** 1998, 69-70:

³¹ **Սեբիոս** 1939, գլ. Թ, 39: **Սեբէոս** 1979, 78:

³² **Յովհան** 2005, գլ. Է, 1093:

³³ **Թովմա** 1887, գլ. Ա.Ե, 39: **Թովմա** 2006, 47: **Թովմա** 2010, 484: Արծրունյաց պատմիչի այս պնդման արժեւորման համար տե՛ս **Հարությունյան** 1998, 88-89:

(Գուգարաց բղեշխը՝ «իշխան Վրաց», Կադմեաց կողմնակալությունը՝ «Նոր Շիրական = Նոտ-Արտաշրական») նաև պատճառ էր դառնում Հայոց կենտրոնական իշխանության թուլության պահերին նրա դեմ համատեղ ելույթների համար, որպես կանոն՝ հրահրված օտարի, առավելապես՝ Սասանյանների կողմից: Հյուսիսում նման մի համատեղ ապստամբություն նկարագրելով («...յետ սորա Գուգարաց բղեաշխն, եւ յետ սորա Ձորայ գաւառին տէրն, եւ Կողբայ գաւառին տէրն [ապստամբեցին յարքայէն Հայոց Արշակայ], եւ ընդ նոսա՝ Գարդմանաձորոյ տէրն»)՝ Փավստոս Բուզանդը նշում է Գարդմանի ու հարևան մի քանի գավառների միանալը Աղվանից թագավորությանը և ապա պատժվելը սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի կողմից («Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից... Եւ թափէր ի նոցանէ զբազում գաւառս, զոր *հարեալ էր նոցա ի նոցանէն*. զՈւտի, զՇակաշէն եւ զձորն Գարդմանայ, զԿողթ եւ այլ, որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս եւ յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից եւ ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. եւ ի գլխաւորացն բազումս սպանանէին»)՝³⁴:

Ընդ սմին, Սասանյան տիրակալները Մեծ Հայքի 387 թ. բաժանման և 428 թ. Արշակունիների թագավորության վերացման պահերին ինչ-որ ժամանակով պահպանեցին նախկին հայկական առանձին բղեշխություններ ու կուսակալություններ (մասնավորապես՝ երկրի հյուսիսում)՝ հարևան երկրների արտաքին սահմանների պաշտպանության և զորական առումով նրանց նկատմամբ որոշակի գերակայության իրենց ավանդական գործառույթներով: 428 թ. իրենց ստեղծած Աղվանից մարզպանության մեջ Սասանյանները մտցրեցին ոչ միայն այդ պահի Աղվանից թագավորությունը (Կուրի ձախափնյակում) ու նրանից արևելք ընկած ծովափնյա շրջանները (որոնք անտիկ Ալբանիա թագավորության մաս էին կազմում՝ Մասքուք, Բաղասական ևն), այլև Կուրի աջափնյա Ուտիք հայկական նահանգը կամ առնվազն նրա հյուսիս-արևմտյան կեսը կազմող Գարդմանացիք իշխանությունը (աշխարհացոյցյան չորս գավառներով՝ Գարդման, Շակաշէն, Տուս-Քուստակ, Աղուէ), որը պահպանում էր իր նախկին կուսակալական գործառույթների գոնե մի մասը՝³⁵: Այդ նույն ռեֆորմով ստեղծվեց նաև Սասանյան տերության

³⁴ Բուզանդ 1933, գլ. Դ.ծ, 166; գլ. Ե.ժգ, 215: Մատենագիրք Հայոց 2003, 364, 390:

³⁵ Ուտիքի հարևան Արցախ նահանգի տարածքն Աղվանից մարզպանության մեջ մտցվեց ավելի ուշ՝ 450-451 թթ. (տե՛ս Հարությունյան 1976, 77-95: Арутюнян 1976: 19-35; Акопян 1987, 109-114; Семенов 2002: 14; Mutafian 2012, t. I, 278): Իսկ 428-431 թթ. միջև Մաշտոցն

Վիրք - Վարջան մարզպանությունը, որի մեջ մտցվեցին Վրաց թագավորությունը և Գուգարաց բղեշխությունը, ընդ որում՝ վերջինը Մեծ Հայքի Արշակունիների թագավորության կազմից հանվել էր նրա 387 թ. բաժանումից հետո, թեպետ շարունակել էր պահպանել իր կուսակալական գործառույթը Կովկասյան լեռների սահմանագծի պաշտպանության առումով՝ կազմելով հարևան Վիրքի հետ միասին Սասանյան տերությանը ենթակա նախամարզպանական շրջանի մի յուրօրինակ վարչա-տարածքային *զույգ*³⁶: Ողջ V դարի ընթացքում այդ զույգի բաղադրիչները պայքարեցին միմյանց դեմ իրական գերիշխանության համար, ինչը լավագույնս արտացոլել է Գուգարքի Վարսկէն (Վազգէն) բղեշխի Շուշանիկ տիկնոջ նահատակության պատմությունը³⁷: Թվում է, թե նման պայքարը նշմարվում է նաև հարևան Աղվանքում³⁸: Ընդ սմին, այդ պայքարի լուծումը տվեցին իրենք՝ Սասանյանները՝ դարավերջին ընդարձակ մարզպանական լիազորությունները վերապահելով թագավորներին՝ Վրաց մարզպանության մեջ Վախթանգ Գորգասալին, Աղվանից մարզպանության մեջ՝ Վաչագան II Բարեպաշտին: Ճիշտ է, դա տևեց լոկ մի քանի տասնամյակ, և 523 թ. Կավատ արքայից արքայի մի նոր ռեֆորմով երկու երկրներում էլ թագավորական իշխանությունը վերացվեց³⁹:

իր երկրորդ հյուսիսային ուղևորության ընթացքում, ըստ Կորյունի մանրամասն տեղեկանու, առանձին է այցելում մի կողմից՝ Կուրի ձախափնյա Աղվանից թագավորություն (հյուրընկալվելով Արսվաղեն-Եսվաղեն թագավորին և Աղվանից Երեմիա ու Բաղասականի Մուշեղ եպիսկոպոսներին), մյուս կողմից՝ աջափնյա Գարդմանաձոր (հյուրընկալվելով տեղի Խուրս իշխանին): Տե՛ս **Կորին** 1941, գլ. ԺԷ, 70-72, գլ. ԺԸ, 72; **Մատենագիրք Հայոց** 2003, 246-247: Նոյն կերպ նա առանձին է այցելում նաև Վրաց թագավոր Արծիվղին (Արչիլ) և Գուգարքի Տաշիր գավառում Աշուշա բղեշխին (**Կորին** 1941, գլ. ԺԸ, 72; **Մատենագիրք Հայոց** 2003, 247): Այս ուղևորությունների ճշգրիտ ժամանակագրության և պատմական ենթատեքստի մասին հատուկ տե՛ս **Յակոբեան** 2006, 122-131; **Յակոբեան** 2020, 86-91:

³⁶ Այդ յուրօրինակ զույգի բնութագրիչները (պարամետրերը) դեռ արժե լրացուցիչ հետազոտել:

³⁷ Տե՛ս **Մուրադյան** 1996: Հմմ. **Очерки истории Грузии** 1988: 63, 70, 493.

³⁸ Տե՛ս ստորև, ծն. 50:

³⁹ Վրաց թագավոր Գուրգենի գահընկեց արվելը մասնագետները մոտավորապես 523-ով են թվագրում Պրոկոպիոս Կեսարացու վկայության հիմքով (**Proc.** 1954, De bello Pers. I, 12, 4-14; **Պրոկոպիոս Կեսարացի** 1967, 154; **Очерки истории СССР** 1958: 251; **Очерки истории Грузии** 1988: 141-143; **Տեր-Պետրոսյան** 1981, 110-111): Վերջին տարիներին այդ հիմքերին արդեն միացել են նաև դրամագիտական տվյալները: Տե՛ս **Gurnet** 1993: 5; **Хуршудян** 2003: 190-193; **Յակոբեան** 2020, 108-109:

Ավարտելով բդեշխական-կուսակալական յուրահատուկ գործառույթի այս քննությունը՝ կարելի է մեր եզրակացությունների լույսի ներքո նորովի անդրադառնալ նաև Հայոց Արևելից կողմանց Գարդմանացի իշխանատոհմին հետագայում տրված «Միհրական/Միհրանեան» անվան (ըստ Մովսես Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ի Բ.Ժ գլխի տոհմագրության) իրական պատմական հիմքերի գոնե համառոտ դիտարկմանը⁴⁰: Այժմ կարելի է առավել հավանական համարել, որ V-VI դարերի ընթացքում Գարդմանացի Հայկազուն տոհմը⁴¹ կամ նրա մի ճյուղը, թերևս, խնամիական և դավանափոխության ճանապարհներով որոշակի մերձեցում է ունեցել Սասանյան տերության մեջ Կովկասյան սահմանի պաշտպանության լիազորության կարևոր իրագործող, ծագումով պարթև, բայց Ատրպատականում հաստատված *Միհրան*

⁴⁰ **Դասխուրանցի** 1983, գլ. Բ.Ժ, 170–172, գլ. Գ.իբ/իգ/, 338–339: Ըստ այս տոհմաբանական ավանդապատումի, որը, անկախ մերօրյա գրականության մեջ դեռ առկա մտայնություններից՝ լիովին վիպական է (մանրամասն տե՛ս **Յակոբեան** 2014, 109-113), իբրև թե «Միհրանեան» տոհմը սերում էր Սասանյան Խոսրով II Ապրուէզ արքային (590-628 թթ) «ազգակից» ոմն Միհրանից, որը Բնդոյի ու Վստամի 595 թ. խռովության ճնշումից հետո 30 հազ. «երդով» փախել էր հյուսիս, բայց խազարների մոտ չհասած՝ Խոսրովի ներման «հրովարտակով» հաստատվել էր Գարդման գավառում, ուր դավադրաբար սպանել էր տեղի 12 Առանշահիկ իշխանների՝ գրավելով նրանց հողերը, իսկ Միհրանի թոռան որդի Վարդանն էլ (ով արդէն քրիստոնեություն էր ընդունել) իբրև թե նոր հաշվեհարդար էր տեսել «Առանշահիկների» հետ՝ կենդանի թողնելով լոկ իր փեսա Զարմիրին:

⁴¹ Մեծ Հայքում Պարթև Արշակունիների թագավորությունն ավանդաբար Ք. ա. II դարում հաստատած Վաղարշակը (որի կերպարի տակ իրապես հանդես է գալիս առավելաբար Ք. հ. I դ. արքա Տրդատ I-ն, հմմ., օր.՝ **Адонц** 1908: 431-433), ըստ Մովսես Խորենացու՝ Հայաստանի հյուսիս-արևելքի «կողմնակալ բիրատր» էր նշանակել Հայոց նահապետ Հայկից սերող և Սիսական նահանգը խորհրդանշող Սիսակի սերնդից ոմն Առանի, ումից էլ ծագել էին Կուրի աջափնյա Ուտիք և Արցախ նահանգների տարածքի՝ պատմիչի ժամանակի չորս իշխանատոհմերը՝ Ուտէացոց (*var.* Աւտէացոց), Գարդմանացոց, Ծաղէացոց (*var.* Ծովղէացոց) և Գարգարացոց («Զօրանամակ»-ում կոչված՝ Գ[ո]ր[ո]զնունի, իսկ «Ներսէսեան գահնամակ»-ում՝ Գորոզուայք. տե՛ս **Յակոբեան** 2009, 281-282; **Յակոբեան** 2011, 537-538, 546, հմմ. **Հակոբյան** 1982, 122-123), ընդ որում՝ Սիսակի «աղու» (=«քաղցր», «մեղմ») մականունից էր այդ տարածքն անվանվել «Աղուանք»: Ի դեպ, Պատմահորից քաղելով այս պատումը՝ Մովսես Դասխուրանցին իրեն բնորոշ հերթական շեղումներն է կատարել. օր.՝ «Աղուանք»-ի մեջ ընդգրկել է նաև Կուրի ձախափնյա, կովկասահայաց տարածքները՝ դրանց թեթևորեն վերագրելով այն, ինչ իր աղբյուրը գրում էր Եգերքի ու Վիրքի հյուսիսակողմերի մասին (հմմ. **Խորենացի** 1913, գլ. Բ.գ, 108-109: **Մատենագիրք Հայոց** 2003, 1854), իսկ Սիսակի «աղու» մականունն էլ հատկացրել է Առանին (**Դասխուրանցի** 1983, գլ. Ա.դ, 8):

ազնվատոհմի հետ: Այս վերջինի մի քանի ներկայացուցիչներ լավ հայտնի են հայկական, վրացական և ասորական աղբյուրներից. օր.⁴² Վարդանանց դեմ պատերազմող Միհրներսեհը, 484-ին մի քանի ամիս Հայոց մարզպան եղած Շապուհ Միհրանյանը, Գրիգոր Ռաժիկ նահատակը Միհրան տոհմից⁴², Ատրպատական շահրի մարզպան և Իրանի գահի հավակնորդ Վահրամ Չուբինը ևն: Նշված մերձեցման շնորհիվ Գարդմանացի իշխանների ձեռքում պիտի մի պահ կենտրոնացած լինեին Կովկասյան ողջ սահմանի (Բաղասականով, Աղվանքով և Վիրքով) պահպանության պատասխանատվությունը, որը նախկինում նրանք կիսում էին (այդպես նաև՝ հետագայում) Գուգարքի բղեջխների, Սյունիքի և նրան ենթակա Գորոզուի «կողմնապահ» իշխանների հետ: Պետք է նկատի ունենալ, որ «Պատմութիւն Աղուանից»-ից լավ հայտնի՝ VI դ. սկզբների գործիչ Վարդան Քաջ Գարդմանացու⁴³ Արմայել պապի հայր և «առաջին Միհրանեան» Միհրան/Միհրը⁴⁴ մեծ հավանականությամբ կարող է նույնացվել Եղիշեի ու Մովսես Դասխուրանցու երկերում հիշված V դ. կեսերի անցքերի մասնակից, «Ճորայ մարզպան» Սեբուխտ

⁴² Նրա մասին տե՛ս **Hoffmann** 1880: 78–86; **Гонладзе** 1979: 14-17; **Յակոբեան** 2000, սն. 146-149, 177-178; **Յակոբեան** 2009, 162-166:

